


**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

«Էջմիածին» ամսագիր, 1970-2010



Ա. ԷԶՄԻԱԾԻՆ – 2011

ՀՏԴ 01 : 23/28

ԳՄԴ 91.9:83 + 86.37

Գ 349

Հրատարակության պատրաստեց
Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՅԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ԳԱՐԵԳԻՆ Բ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գ -349 Էջմիածին ամսագիր, 1970-2010: Հրատ. պատրաստ. Արարատ քին. Պողոսյանը. -Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011- 208 էջ+1 ներդիր:

ՀՏԴ 01 : 23/28

ԳՄԴ 91.9:83 + 86.37

ՆՎԻՎԱՌԻ Է
ՆՈՐԻՆ ՍՈՒԲՈՏՈՒԹՅՈՒՆ

Տ. Տ. ՆԱԲԵՆԻՆ Բ

ԱՐԵՎԵՆԻ ՀԼՅՈՑ ԿԼԹՈՒԿԻՄՈՒ
ԾՆԵԴՅԱՆ 60-ԱՐՅԱԿԻՆ

ISBN 978-9939-59-094-3 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011թ.

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Պարբերական մամուլը մարդկության կյանքի, գիտության և մշակույթի օրագրային գրառումը կամ արձանագրումն է, ավելի ճշգրիտ՝ գրավոր-վավերագրային հիշողությունը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը բոլոր առումներով շարունակությունը և ժառանգորդն է 1868-1919 թթ. հրատարակված «Արարատ» ամսագրի, որը խոր հետք է թողել իր ժամանակի հայկական մամուլի, հասարակական և գիտական մտքի զարգացման ասպարեզներում: Ըստ այսմ և, «Արարատ»-ի նման, «Էջմիածին»-ը ևս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 1944 թվականից ընդհուպ մինչև մեր օրերի 67-ամյա շրջանի օրագրություն-վավերագրումն է, այլ խոսքով՝ ճշգրիտ պատկերը կամ հայելին: Տևական այս ընթացքում ամսագիրն իրապես ամբարել է հարուստ, օգտաշատ ու բազմապիսի արժեքներ:

Մնայուն և տևական արժեք ու նպատակադրում ունեցող նյութեր հրատարակող, որևէ ազգի ամբողջ հանրությանը կամ նրա լայն շերտին ուղղված ցանկացած պարբերական, առավել ևս Հայ Եկեղեցու կենտրոն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գահակալը, անհրաժեշտաբար պետք է ունենա իր անհատական մատենագիտությունը, առանց որի ամսագրում Նրա մասին պարունակած իսկապես թանկարժեք նյութի գործածման արդյունավետությունը խիստ ցածր է:

Հուրախություն մեզ և ի պարծանս Մայր Աթոռի՝ «Արարատ» ամսագիրն իր հրատարակման տարվանից (1968 թ.) մինչև վերջին տարին (1919 թ.) ունի իր մատենագիտությունը¹, ինչպես նաև «Էջմիածին» ամսագիրը, որի մատենագիտության առաջին մասը

¹ Տե՛ս «Մատենագիտություն «Արարատ» ամսագրի», կազմող՝ Սեդա Կոծինյան, խմբագրեցին՝ Սուրեն Քոլանջյան, Արթուր Հատիտյան, Էջմիածին, 1970:

կազմվել և հրապարակվել էր դեռևս 1975 թվականին², իսկ 1974-2008 թթ. տարիների մատենագիտությունը կազմվել և հրատարակվել է 2011 թվականին³:

Սակայն պետք է ասել, որ «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի նման կարևոր պարբերականները, բացի կրոնական, պատմաբանասիրական, և այլ կարգի (գիտական և ոչ գիտական) հոդվածներից, արտացոլում են Մայր Աթոռի և առավել ևս Հայ Եկեղեցու գահակալների գործունեությունը: Ուստի պատահական չէ, որ որևէ Գահակալի մասին այս պարբերականներում եղած նյութերի մեկտեղումը, դասդասումը և համակարգումը ամսագրերից օգտվողներին կօգնի առավել հեշտությամբ հետևելու Ամենայն Հայոց կաթողիկոսների կենաց և գործոց ընթացքին, ընթերցողը դյուրությամբ կկարողանա գտնել Հայրապետի մասին իր փնտրած նյութը (քարոզ, կոնդակ, ուղերձ, շնորհավորանք, ընդունելության և այցելության մասին տեղեկություններ, Հովվապետական և պաշտոնական այցելություններ և այլն, քանզի լինելով Մայր Աթոռի պաշտոնական ամսագրերը՝ առավելապես միայն նրանցում է հրապարակվում ճշգրիտ և հավաստի տեղեկություն Մայր Աթոռի և նրա գահակալների գործունեության մասին:

Այսու, նախածեռնելով կազմել «Էջմիածին» ամսագրում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին վերաբերող նյութերի առանձին մատենագիտությունը, մենք նպատակ ունենք հեշտացնել ամսագրից Նորին Սրբությանը վերաբերող նյութերի փնտրտուքը: Ամսագրից օգտվողները ձեռքի տակ ունենալով սույն մատենագիտությունը, կկարողանան արագորեն և հեշտությամբ գտնել այն նյութը, որն իրենց անհրաժեշտ է, և քանի որ մատենագիտությունը նկարագրությունների մեջ ներառում է նաև ծանոթագրություններ, ուստի ընթերցողը նաև իր փնտրածը գտնելուց հետո կարող է կողմնորոշվել, թե տվյալ նյութն իրեն պետք է, թե ոչ:

2 Տե՛ս «Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի», կազմող՝ Սեդա Կոծինյան, խմբագրեցին՝ Սուրեն Քոլանջյան, Արթուր Հատիսյան, Ս. Էջմիածին, 1975:

3 Տե՛ս «Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի 1974-2008», կազմող՝ Տ. Արարատ քահանա Պողոսյան, խմբագրեց՝ Գևորգ Տեր-Վարդանյանը, Ս. Էջմիածին, 2011:

Ամսագրում առկա «Մայր Աթոռում» խորագիր-վերնագիրը կրող բաժինը օրագրության տեսքով ներկայացնում է Վեհափառ Հայրապետի գրեթե յուրաքանչյուր օրվա իրադարձություն՝ սկսած դեռևս ուսանողական տարիներից: Այդ իրադարձությունները հանդես են գալիս երբեմն այցելությունների, երբեմն տոնակատարությունների, հաճախ հովվական և հովվապետական այցելությունների, բայց առավելապես տարբեր եկեղեցիներում Ս. Պատարագ մատուցելու մասին տեղեկություններ հաղորդելով: Բացի սրանից, ամսագրում հանդիպում են նաև «Այցելություններ» վերտառությունն ունեցող հոդվածներ, որտեղ օրագրային տեսքով ներկայացվում են Մայր Աթոռ ժամանած հյուրերը, թեմակալ առաջնորդները, սփյուռքի նշանավոր գործիչներ և այլք: Հետևաբար ամսագիրը, Վեհափառ Հայրապետի տարեգրությունը լինելով հանդերձ, նաև Նրա օրագրությունն է:

Ամսագրի յուրաքանչյուր համարում տեղ են գտնում հայրապետական քարոզները, կոնդակները, ողջունագրերը, հեռագրերը, մահախոսականները, վճիռները և այլն: Այս ամենն արտացոլում է Վեհափառ Հայրապետի կաթողիկոսության տարիների իրադարձությունները՝ տարվա կամ ամսվա կտրվածքով: Վեհափառ Հայրապետի և այլ եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակած ողջույնի հեռագրերն ու գրությունները լույս են սփռում մեր եկեղեցու էկոմենիկ կապերի վրա:

Ամսագիրը տեղեկություններ է հաղորդում ոչ միայն Հայրենիքում ապրող հայորդիների, այլև աշխարհասփյուռ մեր ժողովրդի մասին, խոսվում է Մայր Հայրենիքի թեմերում կատարված իրադարձությունների մասին: Ամսագրում ներկայացվում է սփյուռքում կատարված այնպիսի իրադարձություններ, որոնք օտար միջավայրում հայկական նկարագիրը պահպանելու համար մեծ դեր են ունեցել: Ամսագրում Սրբոց Վարդանանց և Հայրապետի անվանակոչության տարեդարձի տոնակատարությունները, եկեղեցիների հիմնարկեքները, Մեծ Եղեռնի տարելիցներին նվիրված գիտաժողովները, հայ գրի ու գրականության գործը խթանելու և այլ միջոցառումներին սփյուռքի ակտիվ մասնակցության ներկայացումը Մայր Հայրենի-

քուն ապրողներին հնարավորություն է տալիս բազմապիսի տեղեկություններ ստանալու դրսում ապրող իրենց ազգակիցների, ինչպես նաև Մայր Աթոռի՝ ի դեմս նրա Գահակալի, այդ գործընթացներում բերած ավանդի մասին:

Ամսագիրն արտացոլում է գոյություն ունեցած միջեկեղեցական բոլոր կապերը, որոնք դրսևորվում են միջեկեղեցական սեմինար հանդիպումների, ժողովների, հովվապետների կամ նրանց ներկայացուցիչների հանդիպումների ձևով: Այս բոլորին մեր Եկեղեցու Յուրիստիկոսական շատ գործուն մասնակցություն է ցուցաբերում, նաև՝ իր ասելիքն ունի այդ հանդիպումներում և ժողովներում:

Ամսագիրը պարբերաբար անդրադարձել է Գևորգյան Յոզեֆի Գեմարանի, վերջին շրջանում Վազգենյան հոգևոր դպրանոցի և Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի կյանքին: Ներկայացված են օտարերկրացի և հայրենի գիտնականների հետ տեղի ունեցած հանդիպումներն ու դասախոսությունները, հանդեսները և այլազան միջոցառումները: Յոզեֆի Գեմարանի կյանքում կարևոր տեղ ունեն ավատաճառերի և վարդապետական թեզերի պաշտպանությունները, որոնց վերաբերող հաղորդագրությունների շնորհիվ իմանում ենք, թե գիտական ինչ թեմաներով են հետաքրքրվել ուսանողները և հոգևորականները: Ամսագիրը ներկայացնում է Նորին Սրբության թե՛ մասնակցությունը վերոհիշյալ միջոցառումներին և թե՛ տարաբնույթ վճիռները վերոհիշյալ հոգևոր-կրթական հաստատությունների վերաբերյալ:

Ամսագրի մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նաև հայրապետական վճիռները, որոնք վերաբերում են կարգալուծություններին, ժողովների, հատկապես Գերագույն Յոզեֆի Կոնգրեսի նիստերի գումարմանը և տարատեսակ այլ հարցերի, որոնց վերաբերող վճիռը կայացնելը կամ պատասխանելը Վեհափառ Յայրապետի իրավունքն է:

Ըստ ամսագրում հրատարակված նյութերի Վեհափառ Յայրապետը կարևորում է նաև ներքին և արտաքին կյանքի կարգավորումը: Ամսագիրը մեր Եկեղեցու վարչակազմակերպական կանոնադրությանը վերաբերող հարուստ նյութ ունի: Եկեղեցու ներ-

քին և արտաքին հարաբերությունների կայունացման համար շատ կարևոր այս նույն հարցին, բնականաբար, անդրադարձել է նաև Ս. Էջմիածնի Գերագույն Յոզեֆի Կոնգրեսը, որի գլուխ է կանգնած Յայրոց Յայրապետը:

Ամսագիրը լուսաբանել է Մեծ Եղեռնի ամենամյա դարձած տարելիցներին նվիրված սեմինարներն ու ժողովները: Այս առիթով հրատարակված Յայրապետական քարոզները և կոնդակները Մեծ Եղեռնի միջազգային ճանաչմանը նոր թափ են տալիս և խթան դառնում ի լուր ամբողջ աշխարհի բարձրաձայնելու Յայրոց ցեղասպանության պատմական իրողության ճանաչման խնդիրը:

Ամսագիրը նկարագրում է Յայրաստանի և սփյուռքի հայ և օտարերկրացի ժամանակակից գիտնականների հանդիպումները Նորին Սրբության հետ:

Այսօր ամսագիրը լուսաբանում ու տեղեկացնում է Մայր Աթոռի ու նրա Գահակալի՝ Գարեգին Բ. Ամենայն Յայրոց Կաթողիկոսի Յայրապետական գործունեությունը: Յետևաբար Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագիրն այսօր շարունակում է իր բազմարդյուն գործունեությունը՝ ի նպաստ Յայ Եկեղեցու, ժողովրդի և հայրենի գիտության:

Ներկա մատենագիտության մեջ փորձել ենք հնարավոր չափով հետևել առկա մատենագիտությունների⁴ սկզբունքներին, որպեսզի օգտվողի համար անտեղի դժվարություններ չառաջանան:

Մատենագիտությունը կազմված է ըստ նյութերի համեմատական կարևորության, իսկ խորագրերի ներքո՝ ժամանակագրական սկզբունքով:

«Բվնդ.» սկսվածքով ծանոթագրությունների տակ ամփոփված են հոդվածում առկա ենթավերնագրերը:

Նոր տողից դրված են մեր ծանոթագրությունները, որոնց մեջ փորձել ենք հնարավոր չափով համառոտ բնորոշել այն հոդվածները, որոնց վերնագրերը լիովին չեն վերարտադրում նրանց պարու-

4 Խոսքը «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի հրապարակի վրա եղած մատենագիտությունների մասին է, քանի որ ընթերցողը արդեն ծանոթ է լինելով նշյալ մատենագիտությունների սկզբունքներին՝ հեշտությամբ կյուրացնի նաև այս մատենագիտությունից օգտվելու կանոններն ու եղանակները:

նակությունը (այս պարզաբանումներով առաջնորդվելով, մատենագիտությանն օգտագործողն առավել հեշտությամբ կպարզի, թե հողվածի ընթերցման կարիք ունի կամ ոչ):

Նկարագրություններում փորձել ենք արտացոլել Վեհափառ Հայրապետին վերաբերող բոլորը⁵ նյութերը, որպեսզի ամսագիրը ձեռքի տակ չունենցող օգտվողը ևս միանգամից իմանա, թե ինչ նյութ է հրապարակվել ամսագրում Վեհափառ Հայրապետի վերաբերյալ:

Արդեն ասվեց, որ մատենագիտությունը պարբերականի բանալին է, և եթե այն չկա, ապա պարբերականը կողպված գանձարան է: Սակայն մատենագիտությունն էլ ունի իր բանալին, որը նրա օժանդակ ցանկերն են:

Սակայն ներկա մատենագիտության մեջ մենք չենք ընդգրկել որևէ ցանկ, քանզի մատենագիտությունը կազմված լինելով միայն «Էջմիածին» ամսագրում եղած նյութերից և նաև պարունակելով միայն Վեհափառ Հայրապետին վերաբերող նյութեր, անհրաժեշտ չհամարեցինք ցանկերի պատրաստումը, որն, իհարկե, ոչ մի կերպ չի ազդի մատենագիտությունից հեշտությամբ և դյուրությամբ օգտվելուն:

Այսուհանդերձ պետք է նշենք, որ ներկա մատենագիտությունը անհատական լիակատար մատենագիտություն չէ, այլ իր մեջ ներառում է միայն «Էջմիածին» ամսագրում տպագրված նյութերը:

Մենք գիտակցում ենք, որ նկարագրությունները թերություններից ու վրիպակներից զերծ չեն, սակայն կարծում ենք, որ եթե օգտվողները քիչ թե շատ ծանոթ լինեն մատենագիտություններից օգտվելու սկզբունքներին, ապա անպայման կօտնեն իրենց փնտրած նյութը:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց անաչառ դիտողություններով նպաստեցին մատենագիտության լույս ընծայմանը: Միևնույն ժամանակ երախտագիտությամբ կընդունենք սույնից օգտվողների այն առաջարկները, որոնք կարող են օգտակար լինել հետագա վերահրատարակումների ժամանակ:

ԱՐԱՐԱՏ ԶԱՅԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

⁵ Նշենք նաև, որ հնարավոր է, որ որոշ նյութեր վրիպած լինեն:

ՃԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ծնվել է 1951 թ. օգոստոսի 21-ին ՅՅ Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում:

1965-66 ուստարում ընդունվել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարան:

1970 թ. դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռում ձեռնադրվել է սարկավագ:

1971 թ. փայլուն առաջադիմությամբ ավարտել է Հոգևոր ճեմարանը և մեկ տարի պաշտոնավարել է նույն հարկի տակ՝ որպես տեսչի օգնական, և դասավանդել Նոր Կտակարան:

1972 թ. ձեռամբ Գերաշնորհ Տ. Տիրան արք. Ներսոյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1972 թ. Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրությամբ մեկնել է Վիեննա՝ կատարելագործելու ուսումը տեղի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում:

1975 թ. Վեհափառ Հայրապետի հրամանով տեղափոխվել է Գերմանիա՝ իբրև հոգևոր հովիվ, միաժամանակ շարունակել ուսումը Բոննի համալսարանի աստվածաբանության բաժնում:

1979 թ. վերադարձել է Մայր Աթոռ, ապա մեկնել Ջագորսկ՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևոր ակադեմիայի ասպիրանտուրայում ուսանելու:

1980 թ. մարտին Վեհափառ Հայրապետի կողմից պաշտոնի է կոչվել Արարատյան Հայրապետական թեմում՝ որպես առաջնորդական փոխանորդի օգնական:

1983 թ. մարտի 21-ից՝ Հայրապետական Սրբատառ Կոնդակով ճշանակվել է նույն թեմի առաջնորդական փոխանորդ:

1983 թ. հոկտեմբերի 23-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է եպիսկոպոս:

1989 թ. Գարեգին եպս. Ներսիսյանը Վազգեն Ա. Հայրապետի օրհնությամբ հիմնադրել է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցը:

1990 թ. Տ. Գարեգին արք. Ներսիսյանն ընդգրկվել է Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմում:

1992 թ. նոյեմբերին ստացել է արքուքյան պատիվ:

1995 թ. կաթողիկոսական ընտրությունների ժամանակ հավանական թեկնածուներից էր, սակայն ընտրության երրորդ փուլում հրաժարվել է՝ հօգուտ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ. Կաթողիկոսի:

1995-1999 թվականներին Տ. Գարեգին արք. Ներսիսյանը եղել է ՀՀ նախագահին առընթեր Ներման հանձնաժողովի անդամ:

1998 թ. նոյեմբերի 30-ից մինչև նույն թ. հուլիսի 4-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ Գերաշնորհ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը նշանակվել է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ և վարել Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ընթացիկ գործերը:

1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային-Եկեղեցական ժողովը Գարեգին արքեպս. Ներսիսյանին ընտրել է Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս:

1999 թ. նոյեմբերի 4-ին տեղի է ունեցել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կաթողիկոսական ձեռնադրությունը և օծումը:

2000 թ. մարտի 17-ին Վեհափառ Հայրապետի ջանքերով ՀՀ և Հայ Եկեղեցու միջև ստորագրվել է «Մտադրությունների հուշագիր», որը հետագայում հիմք պիտի հանդիսանար Եկեղեցի-պետություն փոխհարաբերություններն առավել հստակեցնող և կարգավորող համաձայնագրի համար:

2000 թ. սեպտեմբերին Նորին Սրբության ջանքերով Հայ Եկեղեցու և ՀՀ պաշտպանության միջև կնքվել է Հայ Եկեղեցու հոգևոր ծառայության կանոնադրությունը:

2000 թ. նոյեմբերի 8-11-ը եղել է Վատիկանում, որտեղ հանդիպել է Հռոմի Հովհաննես-Պողոս Բ. Պապի հետ և ստորագրել համատեղ հայտարարություն, ըստ որի Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացրած ջարդերը որակվել են որպես ցեղասպանություն:

2000 թ. նոյեմբերի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնել է Մոսկվա՝ հանդիպելու Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի Բ.-ի և Կովկասի ժողովուրդների Վերին Կրոնական Խորհրդի նախագահ, Ադրբեջանի մուսուլմանների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-իսլամ Ալլախշուքյուր Փաշա-գադեի հետ: Հանդիպման ընթացքում երեք առաջնորդների կողմից ստորագրվեց համատեղ հռչակագիր, որով կոչ է արվել ամրապնդել խաղաղությունն Անդրկովկասում և սահմանակից տարածքներում:

2001 թ. սեպտեմբերի 15-ին Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը հանդիպել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Առանձնազրույցի ընթացքում քննարկվել են ՌԴ տարածքում Հայ Առաքելական Եկեղեցու բնականոն և բեղմնավոր գործունեության ծավալմանն առնչվող հարցեր:

2001 թ. մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը ԱՄՆ և Կանադա Հովհաննեսյան անդրանիկ այցելության շրջանակներում Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը մայիսի 23-ին՝ Սպիտակ Տանը, հանդիպել է ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ:

2001 թ. մայիսի 23-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատը Սեմատի սատարմամբ ընդունել է Աջակցության բանաձև՝ ի նշանավորումն քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն հռչակելու 1700 ամյակի և ի պատիվ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի ԱՄՆ կատարած այցելության:

2001 թ. դեկտեմբերի 10-ին Նորին Սուրբ Օծությունը Ֆրանսիա կատարած Հովվապետական անդրանիկ այցելության շրջանակներում հանդիպել է Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ:

2001 թ. սեպտեմբերի 22-ին Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը օրհնել է դարի և հազարամյակի առաջին Մյուռոնը, որին

մասնակցելու համար աշխարհի չորս ծագերից Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին են եկել մեր ժողովրդի ուխտավոր զավակները՝ վերանորոգելու իրենց սրբազան ուխտը:

2001 թ. սեպտեմբերին տեղի է ունեցել Քրիստոնեության 1700 ամյակի տոնակատարությանը: Այդ առիթով Վեհափառ Հայրապետը հյուրընկալել է Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Երկրորդին, Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ.-ին, Հնդկ Մալաբար Եկեղեցու պետ, Արևելքի Կաթողիկոս և Մալանկարայի Պատրիարք, Նորին Սրբություն Բասիլենո Մար Թովմա Մատթեոս Բ.-ին, Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Պապ և Պատրիարք Պետրոս Է.-ին, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Բուխարեստի Արքեպիսկոպոս, Ունգրո-Վալախիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն Թեոկտիստ Ա.-ին, Անգլիկան Եկեղեցու պետ, Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերիին, Ղպտի, Ասորի, Վրաց, Սերբիայի և Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցիների պատվիրակություններին, ԱՄՆ-ի Եպիսկոպոսական, Դանիայի Լյութերական և Գերմանիայի Ավետարանական Եկեղեցիներից ներկայացուցիչներին, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար և Եվրոպական Եկեղեցիների Խորհրդի ներկայացուցիչ Կոնրադ Ռայգերին: Հանդիսություններին մասնակցում էին Հայոց Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալները՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. Կաթողիկոսը, Երուսաղեմի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը՝ իրենց շքախմբերով, Հայոց Եկեղեցու թեմերի թեմակալ առաջնորդներ, Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, ինչպես նաև Հայ Կաթոլիկ և Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչներ, Մխիթարյան միաբանության հայրեր, թեմական վարչությունների անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, ազգային-հասարակական գործիչներ և այլ հյուրեր:

2001 թ. սեպտեմբերի 27-ին Հռոմի Եպիսկոպոս և Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետ Հովհաննես-Պողոս Բ. Պապը և Ն. Ս. Օ. Տ. Տ.

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ստորագրել են համատեղ հայտարարություն, ուր դատապարտվել է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:

2001 թ. սեպտեմբերի 23-ին տեղի է ունեցել Երևանի Մայր եկեղեցու՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծումը:

2002 թ. օգոստոսին Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ՀՀ վարչապետի միջև ստորագրվել է համաձայնագիր՝ 2003 թ. հունվարից հանրակրթական դպրոցներում «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան դասավանդելու մասին:

2003 թ. նոյեմբերի 26-ին Նորին Սրբության, Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլիա Բ.-ի և Կովկասի մուսուլմանների առաջնորդի միջև կնքվել է համատեղ համաձայնագիր՝ միջկրոնական հանդուրժողականության և կովկասյան տարածաշրջանում խաղաղությունն ամրապնդելու հորդորով:

2004 թ. հունիսի 10-18-ը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորություն կատարած այցի շրջանակներում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպել է Անգլիայի թագուհի Էլիզաբեթ Երկրորդի հետ: Հանդիպման ընթացքում խոսվել է երկու պետությունների, ժողովուրդների և եկեղեցիների ջերմ հարաբերությունների, առկա բարեկամության զորացման և ամրապնդման կարևորության մասին: Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը մասնավորաբար անդրադարձել է 1915 թ. Հայոց ցեղասպանությանը, նրա ճանաչմանն ու դատապարտման անհրաժեշտությանը:

2005 թ. ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրվել է Հայ եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում:

2006 թ. մարտի 1-ին Վեհափառ Հայրապետի հրամանով ստեղծվել է Մայր Աթոռի Հրատարակչական բաժինը:

2006 թ. դեկտեմբերի 14-ի Հայրապետական Սրբատառ Կոնդակով հռչակվել է Ֆրանսիայի Հայոց թեմի ստեղծումը:

2007 թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է եկեղեցի-պետություն հարաբերությունները կարգավորող օրենքը:

2007 թ. Վեհափառ Հայրապետը Կ. Պոլիս այցելության ժամա-

նակ լրագրողների հետ հանդիպելիս շեշտել է թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության անժխտելիությունը:

2007 թ. հոկտեմբերի 10-ին Նորին Սրբությունը մասնակցել է ԱՄՆ Կոնգրեսի միսսիոն, որը բացվել է Վեհափառ Հայրապետի աղոթքով:

2008 թ. մայիսի 6-12-ը Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ. Պապի հրավերով գտնվել է Հռոմում:

2008 թ. հոկտեմբերի 24-27-ը Հայոց Հայրապետը Հովվապետական այցով գտնվել է Ռումինիայի հայոց թեմում, ուր հանդիսապետել է Յաշ քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու վերածնունդի արարողությունը:

2008 թ. նոյեմբերի 5-16-ը Հովվապետական այցով եղել է Հնդկաստանում: Այցելության ընթացքում Նորին Սրբությունը հյուրընկալվել է Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Դիդիմոս Ա.-ի կողմից:

2009 թ. սեպտեմբերի 26-ին Վեհափառ Հայրապետը Հովվապետական այցով մեկնել է Արցախ, ուր հանդիսապետել է Արցախի թեմի վերաբացման 20 ամյակին նվիրված միջոցառումները:

2009 թ. նոյեմբերի 4-ին լրացել է Ամենայն Հայոց Հայրապետի Գահակալության և Օծման 10 ամյակը, ինչի առիթով Մայր Աթոռում և Հայ եկեղեցու թեմերում տեղի են ունեցել միջոցառումներ՝ նվիրված Հայոց Հայրապետի Գահակալության 10 ամյակին: Այս առիթով Նորին Սրբությանը շնորհավորանքներ են հղել թե՛ տարբեր եկեղեցիների պետեր և թե՛ տարբեր պետությունների պետական բարձր պաշտոնյաներ:

2009 թ. նոյեմբերի 12-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն Հովվապետական այցով մեկնել է Սիրիայի Արաբական Հանրապետություն:

2010 թ. հունվարի 21-ին Մոսկվայի Սուրբ Ամենափրկիչ տաճարի եկեղեցական ժողովների սրահում Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա.-ն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ին հանձնեց Ալեքսի Բ. Պատրիարքի անվան

«Ուղղափառ ժողովուրդների միասնության ամրապնդման գործում հատկանշական գործունեության, հասարակության կյանքում քրիստոնեական արժեքների հաստատման և ամրապնդման համար» ուղղափառ աշխարհում հեղինակավոր մրցանակը, որը տրվում է պետությունների, կառավարությունների և խորհրդարանների ղեկավարներին, եկեղեցիների հովվապետներին, հասարակական խոշոր գործիչներին՝ ուղղափառ հանրության կյանքում քրիստոնեական բարոյագիտության բարձր արժեքների հաստատման, Արևելյան քրիստոնեության միջավայրում պատմականորեն ձևավորված պետությունների տնտեսական և քաղաքական կապերի ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի համար:

2010 թ. հունվարի 9-ին ԱՄՆ Հայոց Արևելյան թեմ թեմական խորհրդի հրավերով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտոնական այցով մեկնել է ԱՄՆ:

2010 թ. փետրվարի 15-16-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հովվապետական այցով մեկնել է Երուսաղեմ, հանդիսապետել Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանին Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը հանձնելու արարողությունը:

2010 թ. ապրիլի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ ժամանել է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու՝ մասնակցելու կրոնապետերի համաշխարհային գագաթնաժողովին՝ նվիրված կրոնների և ավանդական արժեքների վրա համաշխարհայնացման ազդեցության խնդիրներին:

2010 թ. սեպտեմբերի 4-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն Հայրապետական պաշտոնական այցով մեկնել է ԱՄՆ Հայոց Արևելյան և Արևմտյան թեմեր՝ մասնակցելու տեղի հայ համայնքների կողմից կազմակերպված թեմական կարևոր միջոցառումների՝ Բոստոնում «Հայ ժառանգության զբոսայգու» և Լոս Անջելեսում առաջնորդանիստ Սրբոց Ղևոնդյանց Մայր Եկեղեցու բացման արարողություններին:

2010 թ. դեկտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով չորսօրյա այցով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է ժամանել Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը:

Վեհափառ Հայրեպետը միջեկեղեցական հարաբերությունների շրջանակներում հանդիպումներ է ունեցել Ռուս ուղղափառ, Հռոմի կաթոլիկ, Վրաց ուղղափառ, Ռումին օրթոդոքս, Ղպտի ուղղափառ, Եթովպիայի թևահեղո, Բուլղար ուղղափառ, Անգլիկան և այլ եկեղեցիների պետերի և ներկայացուցիչների հետ:

Նորին Սրբությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է, Հայկական բարեգործական ընդհանուր միության հոգաբարձուների խորհրդի պատվո անդամ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն ստացել է Հորդանանի Ա. կարգի, Պաղեստինի «Բեթղեհեմ–2000», Ռումինիայի ազգային՝ «Ռումինիայի աստղ» (2000) պարգևները, Նորին Սրբությունը դարձել է Արցախի պետական համալսարանի (2000), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության (2001), Երևանի պետական համալսարանի (2004), Մինեսոտայի (ԱՄՆ) Սուրբ Թովմաս համալսարանի (2007) պատվավոր դոկտոր, Ամենայն Հայոց Հայրապետը նաև դարձել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ (2003): Նորին Սրբությունը պարգևատրվել է նաև Ուկրաինայի Հանրապետության «Իշխան Յարոսլավ Իմաստուն» 5–րդ աստիճանի (2001), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի կոմանդորի (2001), Ռուս Ուղղափառ եկեղեցու Սուրբ Անդրեաս առաքյալի (2004), Հնդկի Մալանկարա եկեղեցու «Ս. Թովմաս առաքյալի» (2008), Հայաստանի Հանրապետության «Ս. Մեսրոպ Մաշտոց» (2009) և այլ բարձրագույն շքանշաններով:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

1. **Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը: 1999, Ժ.-ԺԱ., էջ 3-4:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. **Շնորհավորանքներ** Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության, օծման և գահակալության առիթով: 1999, Ժ.-ԺԱ., էջ 18-58:

Բվևր. Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. Կաթողիկոսի խոսքը: Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկյանի խոսքը: Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանի խոսքը: ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի խոսքը՝ ասված Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի օծման առթիվ գահասրահում: ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի շնորհավորական գիրը: Լեռնային Ղարաբաղի հանրապետության նախագահ Արկաղի Ղուկասյանի շնորհավորական գիրը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի շնորհավորական գիրը: Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքի շնորհավորական գիրը: Ռուս Ուղղափառ եկեղեցու Պատրիարքի շնորհավորական գիրը: Վրաց Ուղղափառ եկեղեցու Պատրիարքի շնորհավորական գիրը: Ռումին Ուղղափառ եկեղեցու Պատրիարքի շնորհավորական գիրը: Ասորի Ուղղափառ եկեղեցու Պատրիարքի շնորհավորական գիրը: Եթովպիայի Ուղղափառ եկեղեցու Պատրիարքի շնորհավորական գիրը: Հնդկաստանի Մալալուսանկարա Ասորական Ուղղափառ եկեղեցու Արևելյան Քոթայամի Կաթողիկոս Բասիլեոս Մար Թոմա Մատթեոս երկրորդի շնորհավորական գիրը: Բուլղար Ուղղափառ եկեղեցու Պատրիարքի շնորհավորական գիրը: Լեհաստանի Ուղղափառ եկեղեցու Մետրոպոլիտի շնորհավորական գիրը: Անգլիկան եպիսկոպոսապետի շնորհավորական գիրը: Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Ուղղափառ եկեղեցու արքեպիսկոպոսի շնոր-

հավորականը: Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքի շնորհավորական գիրը: Ռուս Ուղղափառ Եկեղեցու Սմոլենսկի և Կալինինգրադի մետրոպոլիտի շնորհավորական գիրը: Համայն Ամերիկայի և Կանադայի Հույն Ուղղափառ Եկեղեցու առաջնորդի շնորհավորական գիրը: Կաթողիկե Հայոց Պատրիարքի շնորհավորական գիրը: Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Եղբայրակցական Միության նախագահի շնորհավորական գիրը: Զիկագոյի կաթոլիկ արքեպիսկոպոսի շնորհավորական գիրը: Անտիոքի և Համայն Արևելքի Մարոնիտ Եկեղեցու Պատրիարքի շնորհավորական գիրը: Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր մարտիոլարի շնորհավորական գիրը: Եվրոպական եկեղեցիների խորհրդի գլխավոր մարտիոլարի շնորհավորական գիրը: Ուսուցչական Լուսաբանական արքեպիսկոպոսի շնորհավորական գիրը: Վիկտորիայի Եկեղեցիների Խորհրդի գլխավոր մարտիոլարի շնորհավորական գիրը: Ֆրանսիայի Հանրապետության նախագահի շնորհավորական գիրը: Վրաստանի Հանրապետության նախագահի շնորհավորական գիրը: Ռուսաստանի Դաշնության նախագահին առընթեր Կրոնական Միությունների հետ հարաբերությունների խորհրդի նախագահ Ալեքսանդր Կոլոջինի շնորհավորական գիրը: Ռուսաստանի Դաշնության Խորհրդարանի Հասարակական և Կրոնական կազմակերպությունների կոմիտեի և ուղղափառության հարցերով Եվրոպայի միջխորհրդարանական համաժողովի նախագահ Վիկտոր Զորկալցեվի շնորհավորական գիրը: Սանկտ Պետերբուրգի նահանգապետի շնորհավորական գիրը: Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանի շնորհավորական գիրը: Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Միշել Լեգրայի շնորհավորական գիրը: Հայաստանում Մալթայի ինքնիշխան Մարտական Միաբանության դեսպան Անդրե Գյուտզվիլլերի շնորհավորական գիրը: Լիբանանի Հանրապետության կառավարության անդամ Արթուր Նազարյանի շնորհավորական գիրը: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահի շնորհավորական գիրը: Ամերիկայի Հայկական Համագումարի Հոգաբարձուների Խորհրդի նախագահի շնորհավորական գիրը: Ռամկավար ազատական կուսակցության նախագահի շնորհավորական գիրը: Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության նախագահ Վահրիժ Ճերեճյանի շնորհավորական գիրը: «Հայք» հաստատության նախագահի շնորհավորական գիրը: Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի շնորհավորական գիրը:

3. **Պետական** և ազգային շրջանակներից: 2001, Ա., էջ 13:
Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առիթով շնորհավորականներ են ուղղված Վեհափառ Հայրապետին:
4. **Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երրորդ տարեդարձը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: 2002, ԺԱ.-ԺԲ., էջ 6:
5. **Տոնիկյան Թորգոմ արք.**, Նորանոր իրագործումների ճանապարհին: 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 126-128:
Նվիրված է Գարեգին Բ. Վեհափառի գահակալության 5-րդ տարեդարձին:
6. **Խմբագրական**, Գևորգյան ճեմարանը և Հայոց Հայրապետը [Երկու լուսանկար]: 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 3-5:
Նվիրված է Գևորգյան Հոգևոր ձեմարանի 130 և Վեհափառ Հայրապետի գահակալության 5 ամյակներին:
7. **Մայր Աթոռում Ս. Էջմիածնում** նշվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և գահակալության հինգերորդ տարեդարձը [Երկու լուսանկար]: 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 121:
8. **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և գահակալության հինգերորդ տարեդարձը [Երկու լուսանկար]: 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 121:
9. **Պարսամյան Խաժակ արք.**, Ս. Խաժակ արք. Պարսամյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին Գարեգին Բ. Կաթողիկոսի գահակալության հինգերորդ տարեդարձի առիթով [7 նյութերի 2004]: 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 52-56:
10. **Մայր Աթոռում** նշվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և գահակալության 6-րդ տարեդարձը: 2005, Ժ.-ԺԱ., էջ 3:
11. **Տերտերյան Հովնան արք.**, Ս. Հովնան արք. Տերտերյանի քարոզը՝ խոսված Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի գահա-

կալության տարեդարձին մատուցված Ս. Պատարագին [6 տեմբերի 2005]: 2005, ժ.-ժԱ., էջ 42-44:

12. **Հայրապետական** մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի ծննդյան տարեդարձի առիթով [երկու լուսալուսանկար]: 2006, Է.-Ը., էջ 3-4:
13. **Մայր Աթոռ Ս. Էջմիածնում** նշվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և գահակալության 7-րդ տարեդարձը [երկու լուսանկար]: 2006, ժ.-ժԱ., էջ 3-5:
Բվևդ. Մայր Աթոռ է բերվել Սկևռայի մասնատուփը:
14. **Նշվեց** Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձը: 2007, ժԱ., էջ 161:
15. **Հայրապետական** մաղթանք Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 9-րդ տարեդարձի առիթով [երեք լուսանկար]: 2008, ժԱ., էջ 3:
16. **Ամանյան Շահե արդ.**, Ի տասնմեկի գահակալութեան Տեառն Տեառն Գարեգնի Երկրորդ Հայրապետին Ամենայն Հայոց: 2009, ժԱ., էջ 9-10:
17. **Բենեդիկտոս Ժ2. Պապ**, Շնորհավորագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տասնամյակի առիթով: 2009, ժԱ., էջ 14-15:
Նկարագրվում է Գարեգին Բ. Հայրապետի գահակալության 5-րդ և Գևորգյան Հոգևոր ճեմարանի 130-ամյակների նշման արարողությունը:
18. **Խուղավերդյան Անի**, Լրագրական էթիկայի մի կարևոր դաս իմ կյանքում: 2009, ժԱ., էջ 11-12:
19. **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տասնամյակի տոնախմբությունը հնդկահայ համայնքում: 2009, ժԱ., էջ 144:
20. **Կիրիլ Ա. Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք**, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա.-ի շնորհավորական ուղերձը Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ.-ին՝ գահակալության տասնամյակի առիթով: 2009, ժԱ., էջ 13-14:

21. **Հայրապետական** մաղթանք Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 11-րդ տարեդարձի առիթով: 2010, ժԱ., էջ 17:

ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՃՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

22. **Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական անդրանիկ այցը Արցախի թեմ [մեկ լուսանկար. 25-29 սեպտեմբերի 2000]: 2000, Թ., էջ 18-37:
Բվևդ. Այցելություն ԼՂՀ Նախագահին: Այցելություն ԼՂՀ Ազգային ժողով: Այցելություն Մարտունու շրջան: Մարտունի: Ճարտար: Սոս: Սխտորաշեն: Ամարաս: Հեր-հեր: Հանդիպում ԼՂՀ կառավարությունում: Այցելություն Խնածախ, Վանք և Գանձասար: Վեհափառ Հայրապետը շնորհվեց Արցախի Համալսարանի պատվավոր դոկտորի կոչում: Հանդիպում ԱԳ և ՊՆ Նախարարների հետ: Վեհափառ Հայրապետն այցելեց Ծուշիի Ղազանչեցվոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի:
23. **Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական անդրանիկ այցը Շիրակի թեմ [24-30 հուլիսի 2000]: 2000, Է., էջ 11-27:
Բվևդ. «Տեսա գյումրեցու ջերմ հավատքը, որ բացառիկ է»: Այցելություն Առափի, Ոսկեհասկ, Ամասիա և Աշոցք: «Մեր երեխաների հպարտությունը հող հայրենին է»: «Հավատարիմ լինենք հայրենական ավանդներին»: «Անթույլատրելի և վիստայությունն ու տկարությունը»: Այցելություն Հոռոմ, Փանիկ, Մեծ և Փոքր Մանթաշ գյուղերը: Հոռոմ: Փանիկ: Մեծ և Փոքր Մանթաշներ: Այցելություն Ախուրյան, Ազատան, Պեմգաշեն և Սառնաղբյուր: Ախուրյան: Ազատան: Պեմգաշեն: Սառնաղբյուր: Այցելություն Հառիճավանք, Արթիկ և Մարալիկ: Արթիկ: Արթիկի Ս. Աստվածածին եկեղեցում: Վեհափառ Հայրապետն այցելեց Արթիկի մշակույթի տուն: Ուխտագնացություն Լմբա-

տի վանք: Մարալիկ: Գյումրիի Ա. Հակոբ եկեղեցու հիմնարկերը: Ս. Պատարագ Վարդավառի տոնին:

24. **Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Ռուսիան [մեկ լուսանկար. 17-21 սեպտեմբերի 2000]: 2000, Թ., էջ 12-17:

Բվլդ. Սեկնում: Ժամանում: Այցելություն թեմեր: Այցելություն Ռուսիայի Հանրապետության Նախագահի Նստավայր և Հայոց եկեղեցի:

25. **Գարեգին Բ.** Կաթողիկոսը պաշտոնական այցելությամբ մեկնեց եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի պաշտոնատեղի՝ Ժնև [23 փետրվարի 2001]: 2001, Բ.-Գ., էջ 14-15:

26. **Գարեգին Բ.** Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական անդրանիկ այցելությունը Միացյալ Նահանգներ և Կանադա [5-31 մայիսի 2001]: 2001, Ե., էջ 3-38:

Բվլդ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.-ի հայրապետական անդրանիկ այցելությունը Միացյալ Նահանգների Արևելյան թեմ: Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.-ն վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

27. **Հովհաննիսյան Արթուր սրկ.,** Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական անդրանիկ այցելությունը Ֆրանսիա [տասը լուսանկար. 6-17 դեկտեմբերի 2001]: 2001, ԺԲ., էջ 3-37:

Բվլդ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Սպիտակի երկրաշարժի 13-րդ տարելիցի առիթով: «Սեն սերժ» համալսարանի դեկան հայր Բորիս Բոբրինսկու ողջույնի խոսքը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը Փարիզի Սուրբ Հովհաննես Ակրտիչ առաջնորդանիստ եկեղեցում: Ֆրանսիայի Հանրապետության Նախագահ Ժակ Շիրակի խոսքը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Եվրոպայում Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակ և Փարիզի առաջնորդ գերաշնորհ Տ. Գյուտ արք. Նագաշյանին «Պատվո լեգեոնի կոմանդոր» շքանշան հանձնելու կապակցությամբ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Ֆրանսիայի Հանրապետության Նախագահ Ժակ Շիրակի հետ հանդիպման ժամա-

նակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մարսելի քաղաքապետի հետ հանդիպման ժամանակ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը խաչքարի օրհնության առիթով: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Փարիզի Սուրբ Աստվածամոր տաճարում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մարսելի Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցում:

28. **Վեհափառ** Հայրապետն իր օրհնությունը տվեց երիտասարդական ուխտագնացության մասնակիցներին: 2001, Զ.-Է., էջ 35-36:

29. **Հովհաննիսյան Արթուր սրկ.,** Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ հովվապետական այցելությունը Հարավային Ամերիկա [քսանմեկ լուսանկար. 4-25 մայիսի 2004]: 2004, Ե., էջ 3-52:

Բվլդ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ հովվապետական այցելությունը Բրազիլիայի հայոց թեմ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Սան Պաուլոյի Սուրբ Գևորգ Հայոց եկեղեցում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Սան Պաուլոյում «Սուրբ Էջմիածնի գանձերը» ցուցահանդեսի բացմանը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Օգասկոյի Սուրբ Հովհաննես Ակրտիչ եկեղեցում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը Սան Պաուլոյի Սուրբ Գևորգ եկեղեցում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ այցը Ուրուգվայի Հայոց թեմ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Մոնտեվիդեոյի Ս. Ներսես Շնորհալի եկեղեցում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական անդրանիկ այցելությունը Արգենտինայի Հայոց թեմ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Կորդոբայի Սուրբ Գևորգ եկեղեցում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Կորդոբայի Սուրբ Գևորգ եկեղեցում մատուցված Ս. Պատարագին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Ս. Աստվածածին մատուռի օծմանը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին

Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Բունեսու Այրեսի Արմենիա հրապարակում կանգնեցված խաչքարի օրհնությանը: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Բունեսու Այրեսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

30. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Գուգարաց թեմ [6 սեպտեմբերի 2004]: 2004, Թ.-Ժ., էջ 182:

31. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Ֆրանսիա [9-18 դեկտեմբերի 2006]: 2006, ԺԲ., էջ 11-21:

Բվևղ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 100-ամյակին նվիրված հորելյանական հանդիսությանը: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը Փարիզի Սուրբ Հովհաննես Մկրտիչ հայոց եկեղեցում հայրապետական Ս. Պատարագի ընթացքում: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը Մարսելի հայոց Սրբոց Թարգմանչաց եկեղեցում հայրապետական Ս. Պատարագի ընթացքում: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Սուրբ Սահակ-Մեսրոպ մշակույթի կենտրոնի ընդարձակման հիմնաքարի օրհնության առիթով:

32. Բաղումյան Վարդան սրկ., Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցելությունը ԱՄՆ [քսանութ լուսանկար. 30 սեպտեմբերի-3 նոյեմբերի 2007]: 2007, ԺԱ., էջ 3-60:

Բվևղ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Փասադենայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օժան ժամանակ: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Բրբենքի առաջնորդակիստ մայր տաճարի հիմնարկեքի առիթով: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Սուրբ Վարդան եկեղեցում «Հրաշափառի» արարողության ժամանակ: Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Վաշինգտոնի Սուրբ Աստվածածին եկեղեցում «Հրաշափառի» ժամանակ: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Հրաշափառի» արարողության ժամանակ: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Ֆլորիդիայի

Ս. Հակոբ եկեղեցու օժան առիթով: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հյուսթոնի Ս. Գևորգ եկեղեցում: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը Նյու Յորքի Ս. Վարդան Մայր տաճարում Սուրբ Պատարագի ընթացքում: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ԱՄՆ հայոց Արևելյան թեմի հայրապետական այցելության առիթով Նյու Յորքում տրված ծաղկերույթի ժամանակ: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը միջեկեղեցական հանդիպման ընթացքում: Ամենայն Հայոց Կաթողիկոսի միամսյա հովվապետական այցելությունը ավարտվեց:

33. Բաղումյան Վարդան սրկ., Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Հնդկաստան [տասնութ լուսանկար. 24 փետրվարի-5 մարտի 2007]: 2007, Բ.-Գ., էջ 5-16:

34. Ծատուրյան Արամ սրկ., Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցելությունը Ռուսիայի և Մոլդովիա [չորս լուսանկար. 24-27 հոկտեմբերի 2008]: 2008, ԺԱ., էջ 4-13:

Բվևղ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Բուխարեստի մայր եկեղեցում: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը Յաշ քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերածման առիթով:

35. Համբարձումյան Ավետիս քին., Ծատուրյան Արամ սրկ., Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը Հնդկաստան [տասնչորս լուսանկար. 5-16 նոյեմբերի 2008]: 2008, ԺԱ., էջ 14-34:

Բվևղ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Ս. Պատարագի ավարտին: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մադրասի Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցու վերածման ժամանակ: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը քահանայական ձեռնադրության ընթացքում: 15 նոյեմբերի 2008: Վեհափառ Հայրապետը քահանա է ձեռնադրել Հարություն սրկ. (Տ. Ավետիս քին.) Համբարձումյանին:

ԿՈՆԴԱԿՆԵՐ

(ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿ, ԽԱՌԸ ԿՈՆԴԱԿՆԵՐ, «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ», «ՍՈՒՐԲ ՍԱՅԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ» ԵՎ «ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԶՆՈՐՅԱԼԻ»)

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿ

36. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Վեհափառ Յայրապետի անդրաճիկ կոնդակը [5 փետրվարի 2000]: 2000, Բ., էջ 3-9:
37. **Փետրվարի 6-ին կընթերցվի Ամենայն Յայոց Կաթողիկոսի անդրաճիկ կոնդակը** [մեկ լուսանկար]: 2000, Բ., էջ 14:

ԽԱՌԸ ԿՈՆԴԱԿՆԵՐ (ՆՁԱՆԱԿՈՒՄՆԵՐ, ԶՆՈՐՅԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ, ՅՈՒՐԵԼՅԱՆԱԿԱՆ, ԱՐՔՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԻ ԶՆՈՐՅԱՆ, ԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՅԻՄՆԱԴՐՄԱՆ, ՕԾՄԱՆ ԵՎ ԱՅԼՆ)

38. **Վազգեն Ա. Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Վեհափառ Յայրապետի կոնդակը Տ. Գարեգին վրդ. Ներսիսյանին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ նշանակելու մասին [21 Գ. 1983]: 1983, Բ.-Գ., էջ 3-4:
39. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Վեհափառ Յայրապետի կոնդակը Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցին՝ տասնամյա հորեյանի առիթով [5 դեկտեմբերի 2000]: 2000, ԺԲ., էջ 7-8:

40. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Յայրապետական կոնդակներ և օրհնության գրեր: 2000, Բ., էջ 27-38:

Վեհափառ Հայրապետը շքանշաններ և օրհնության գրեր է հանձնել Լայնըլ Կոլաթընին, Անդրանիկ Սարյանին, Էտվրտ և Պարպրա Փիթրոզներին, Խաչատուր Յալտրոզյանին, Բարգեն ավ. քն. Մագուտյանին և Փայլակ Ահարոնյանին:

41. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Յայրապետական կոնդակներ և օրհնության գրեր: 2000, Գ., էջ 21-31:

Հայ Եկեղեցու բարձր շքանշանների և Հայրապետական օրհնության են արժանացել Գևորգ Դաքեյանը, Գնել արք. Ճերեճյանը, ԱՄՆ-ի Հայոց Արևելյան թեմի Պատգամավորական ժողովը, ԱՄՆ-ի Արևելյան թեմի Հոգևորականաց համագումարը, ԱՄՆ-ի Հայոց Արևմտյան թեմի Պատգամավորական ժողովը և ԱՄՆ-ի Արևմտյան թեմի Հոգևորականաց համագումարը:

42. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի կոնդակը հոգեշնորհ Տ. Եզրաս վրդ. Ներսիսյանին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ նշանակելու մասին [11 ապրիլի 2001]: 2001, Դ., էջ 16-17:

43. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի կոնդակը ռումինահայ թեմի կազմավորման 600-ամյակի առթիվ [10 հուլիսի 2001]: 2001, Զ.-Է., էջ 47-49:

44. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի կոնդակը գերաշնորհ Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ նշանակելու մասին [5 մայիսի 2001]: 2001, Ե., էջ 39-40:

45. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի կոնդակը գերաշնորհ Տ. Յակոբ եպս. Գըլընճյանին արքուքյան պատիվ շնորհելու մասին [2 հուլիսի 2001]: 2001, Զ.-Է., էջ 50-51:

46. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Վեհափառ Յայրապետի սրբատառ կոնդակը հայոց մեծ դարձի 1700 ամյա հոբելյանի առիթով [մեկ լուսակար. 6 հունվարիի 2001]: 2001, Ա., էջ 6-10:
47. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» աղոթամատյանի գրության 1000-ամյակի առիթով [30 նոյեմբերի 2002]: 2002, ԺԱ.-ԺԲ., էջ 3-5:
48. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Յայաստանի Յանրապետության զինված ուժերի կազմավորման տասնամյակի առթիվ [25 հունվարիի 2002]: 2002, Ա., էջ 15-16:
49. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Ս. Էջմիածնի Գևորգյան Յոգևոր ճեմարանին Յայաստանի Յանրապետության կառավարության կողմից բարձրագույն կրթական հաստատության կարգավիճակ շնորհելու մասին [21 օգոստոս 2002]: 2002, Ը., էջ 31-33:
50. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700 ամյակի առիթով: 2003, Բ., էջ 3-5:
51. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը «Մատենադարանի բարեկամներ» հիմնադրամի առիթով [3 սեպտեմբերի 2004]: 2004, Թ.-Ժ., էջ 9-11:
52. **Գարեգին Բ.** Վեհափառ Յայրապետի կոնդակով 2003 թվականը հռչակվեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի տարի: 2003, Բ., էջ 6:
53. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Գևորգյան Յոգևոր ճեմարանի հիմնման 130 ամյակի առիթով: 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 6-8:
54. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Յատվածներ Գարեգին Բ. Վեհափառ Յայրապետի կոնդակներից և գահակալության շրջանի քարոզներից ու խոսքերից: 2004, ԺԱ.-ԺԲ., էջ 148-1171:
55. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Վազգեն Առաջինի վախճանման տասնամյակի առիթով: 2004, Է.-Ը., էջ 3-5:
56. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Յայոց գրերի գյուտի 1600-ամյակի առիթով [29 հունվարիի 2005]: 2005, Ա., էջ 14-17:
57. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Յայոց Մեծ Եղեռնի 90-ամյակի առիթով [3 փետրվարի 2005]: 2005, Բ.-Գ., էջ 6-9:
58. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը հայոց Մեծ Եղեռնի 90-ամյակի առիթով [3 փետրվարի 2005]: 2005, Դ., էջ 3-6:
59. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Տ. Արամ եպս. Աթեշյանին արքունիության պատիվ շնորհելու մասին [15 հունիսի 2006]: 2006, Զ., էջ 40-41:
60. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանին արքունիության պատիվ շնորհելու մասին [17 մայիսի 2006]: 2006, Ե., էջ 12-13:
61. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Տ. Նավասարդ եպս. Կճոյանին արքունիության պատիվ շնորհելու մասին [18 մայիսի 2006]: 2006, Ե., էջ 10-11:

62. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Տ. Վիգեն եպս. Այքազյանին արքունիքի պատիվ շնորհելու մասին [5 նոյեմբերի 2006]: 2006, Ժ.-ԺԱ., էջ 11-12:
63. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը գերաշնորհ Տ. Արիս եպս. Շիրվանյանին արքունիքի պատիվ շնորհելու մասին [1 դեկտեմբերի 2006]: 2006, ԺԲ., էջ 6-7:
64. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը գերաշնորհ Տ. Սևան եպս. Ղարիբյանին արքունիքի պատիվ շնորհելու մասին [1 դեկտեմբերի 2006]: 2006, ԺԲ., էջ 8-9:
65. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Ֆրանսիայի հայոց թեմի կազմավորման մասին [26 հոկտեմբերի 2006]: 2006, ԺԲ., էջ 3-5:
66. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Տ. Նորվան եպս. Զաքարյանին արքունիքի պատիվ շնորհելու մասին [20 օգոստոսի 2007]: 2007, Ը., էջ 3-4:
67. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը «Ս. Էջմիածնի բարեկամներ» հիմնադրամին աջակցելու համար [28 սեպտեմբերի 2007]: 2007, Թ., էջ 19-20:
68. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Ադանայի հայոց կոտորածների 100-ամյա տարելիցի առիթով: 2009, Դ., էջ 3-5:
69. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը ԱՄՆ հայոց

Արևմտյան թեմի հաստատման ութսունամյակի առիթով [25 հունվարի 2007]: 2007, Ա., էջ 13-15:

70. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը մայիսյան հերոսամարտերի առիթով: 2008, Ե., էջ 30-32:
71. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ծառայ Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբն եւ կամօքն ազգիս եպիսկոպոսապետ եւ Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի քրիստոսաւան սիրոյ ողջոյն եւ օրհնութիւն հայրապետական Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Պատրիարքութեանց հայոց սրբոց Երուսաղեմայ եւ Կոստանդնուպոլսոյ, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից եւ սարկաւազաց, թեմական երեսփոխանական ժողովոց, թեմական եւ համայն հաւատացեալ ժողովրդեան հայոց [կոնդակ. 24 խեպտեմբերի 1991]: 2009, Թ., էջ 3-5:
72. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ծառայ Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբն եւ կամօքն ազգիս եպիսկոպոսապետ եւ Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի քրիստոսաւան սիրոյ ողջոյն եւ օրհնութիւն հայրապետական Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Պատրիարքութեանց հայոց սրբոց Երուսաղեմայ եւ Կոստանդնուպոլսոյ, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից եւ սարկաւազաց, թեմական երեսփոխանական ժողովոց, թեմական եւ համայն հաւատացեալ ժողովրդեան հայոց [կոնդակ. 28 2. 1991]: 2009, Զ., էջ 7-8:
73. **Յայրապետական** սրբատառ կոնդակով հիմնվեցին երկու նոր թեմեր: 2010, ԺԲ., էջ 140-141:

74. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի կոնդակը արժանապատիվ Տ. Գառնիկ ավագ քահանա Յալաջյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [25 հոկտեմբերի 2000]: 2000, ժ. էջ 26-27:
75. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի կոնդակը Արա Աբրահամյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [6 հուլիսի 2000]: 2000, ժԱ., էջ 31-32:
76. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի կոնդակը Իշխան Պիտեճին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [11 ապրիլի 2001]: 2001, Դ., 18-19:
77. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Երուսաղեմի հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [23 սեպտեմբերի 2001]: 2001, ժԲ., էջ 38-39:
78. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Վալերի Մեջլումյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [5 նոյեմբերի 2001]: 2001, ժ.-ժԱ., էջ 42-43:
79. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Սավի Թյուֆենքյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [6 նոյեմբերի 2002]: 2002, ժԱ.-ժԲ., էջ 45-46:
80. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը տեր և տիկին Բեդկյաններին

«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [22 մայիսի 2002]: 2002, Ե., էջ 15-16:

81. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը տեր և տիկին Գառնիկ և Քարեն Տյուլկերյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [11 սեպտեմբերի 2003]: 2003, Թ., էջ 17-18:
82. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը տեր և տիկին Ջեսուրյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [22 մայիսի 2002]: 2002, Ե., էջ 17-18:
83. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը տեր և տիկին Փինեճյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [22 մայիսի 2002]: 2002, Ե., էջ 19-20:
84. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը տեր տիկին Արսլանյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [7 հունիսի 2002]: 2002, Ձ.-Է., էջ 20-21:
85. **Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Յայոց**, Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսի կոնդակը Սերգեյ Կազարյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին [4 նոյեմբերի 2002]: 2002, ժԱ.-ժԲ., էջ 47-48:
